№ 23 ՇԱԲԱԹ 19 ՅՈՒՆԻՍԻ № 32

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՆԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆՑ ԱՌՆՈՒ 10 ԿՈՊԷԿ ՏՈՂԻՆ ԵՒ 1 ԿՈՂՔ։
Յայտարարութիւնները ընդունվում են ...

ՀԱՅԱՍՏԱՆԻ ... Է ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ՕՐ ՄԻ ԹԵՐԹ. ՏԱՐԵԿԱՆ ԳԻՆՆ Է 7 Ռ.
Ստորագրութիւնք ընդունվում են ուղղակի
— Въ редак. газеты „Пчела Арменіи“.

Առաջիկայ Յուլիս ամսոյ 1-ից ցանկացողք կարող են Մեղուին բաժանորդ գրուել կիսամեայ ժամանակով։

Կիսամեայ բաժանորդագինն է 4 ռ. Փոստայի և տուն հասցնելու ծախքը խմբագրութեան վերայ է։

ԹԻՖԼԻՍ 19-ՆԻ ՅՈՒՆԻՍԻ

Ընթերցողը կը կարդայ Մեղուի ներկայ համարում Ֆուադ փաշայի նամակն, ուղղած նոյնպէս հանգուցեալ Աբդուլ Ազիզ Սուլթանին։ Ֆուադ փաշան Տաճկաստանի ներկայ դարուս առաջնակարգ քաղաքագէտ անձնաւորներից մէկն էր։ Ընթերցողը կարող է տեսնել, թէ որքան նա ճիշդ և ուղիղ ըմբռնել է Տաճկաստանի ներկայ վիճակն և հասկացել նորա փրկութեան ճանապարհն անկումից։

Որքան էլ խորհմատ է նամակն և մի ազգասէր Տաճկի գրչից ելած, հայեացքներն մեծ մասամբ ուղիղ, բայց և այնպէս ոչ անսխալական և ազգայնութեան հարցին դէմ չմեղանչող։

Ֆուադ փաշան լաւ հասկանում է, որ Տաճկաստանի փրկութեան միակ ճանապարհն է իւրաւանց հաւասարութիւնը նորա բոլոր հպատակաց, առանց դաւանութեան ազգութեան և կրօնի։ Նա խորհուրդ է տալիս Սուլթանին խտրութիւն չանել տէրութեան պաշտօններ տալում ոչ քրիստոնէի և ոչ էլ մահմետականի մէջ, այլ ազատ թողնելով իւրաքանչիւրին դաւանելու իւր համոզման համաձայն ընտրած բարոյական կրօնը, ուշադրութիւն դարձնել միայն ամէն հպատակաց քաղաքական կրօնի վերայ, որ նոքա այս կողմանէ դաւանեն միայն տաճկական քաղաքական կրօնը։ Ֆուադ փաշան խորհուրդ է տալիս ամէն անհատի տալու կրօնական ազատութիւն, միայն նոցա ազգայնութեան մասին, որ կայանում է առաւելապէս լեզուի և գրականութեան մշակութեան մէջ, ամէն ազգի առանձնայատկութեանց զարգացման մէջ, ընտանեկան և հասարակական կեանքի ինքնուրոյնութեան մէջ, ոչինչ չէ ասում։ Այս վերջիններիս մասին վերաբերութեամբ Տաճկահպատակ ազգաց ոչինչ չէ յիշում, այլ միայն ասում է, որ եթէ մի քրիստոնեայ կամ մահմետական փաշայի մէջ նկատվի հակամիտութիւն դէպի իւր առանձին ազգայնութիւնը, հարկաւոր է այնպիսին հեռացնել պաշտօնից։ Նորա խօսքերից երևում է, որ Տաճկաստանի կառավարութիւնը պէտք է իւր այլազգեան և այլալեզու հպատակաց կոսմոպոլիտիկական ուղղութիւն տայ, ապահով լինելով, որ այդ ուղղութիւնը կը ձուլէ բոլոր ազգերին աւելի զօրեղ Տաճկական տարրի մէջ. բայց դա մի երազ է, վասն զի տաճկական ազգը չէ բովանդակում իւր մէջ գէթ այսօր ոչ բարոյական, ոչ մտաւոր և ոչ էլ այլ բնական մի այնպիսի զօրութիւն, որ կարող լինէր բռնանալ այլ հպատակ աւելի փոքրաթիւ, բայց բարոյապէս զօրեղ ազգերի վերայ։ Տաճկաստանի քրիստոնեայ ազգերը իրանց լուսաւորութիւնն ու գիտութիւնը ստանում են Եւրոպական ազգերից, Ֆրանսիացիներից, Անգլիացիներից և Գերմանացիներից, որոնց հետ և բարոյապէս կապվում են։ Եթէ նոքա կոսմոպոլիտիկական ուղղութիւն բռնեն, աւելի շուտով կը միանան և կձուլվին այդ Եւրոպական ազգերի հետ, քան Տաճիկների հետ, որոնցից ընդհակառակն օր աւուր հեռանում են և խորթանում թէ մտաւորապէս և թէ կեանքով։ Միայն նոյն իսկ Տաճիկ ազգի Եւրոպական լուսաւորութիւն և քրիստոնէական կրօն ընդունելն այսուհետև կարող կլինի նրան իւր հպատակ քրիստոնեայ ազգերի հետ սիրութեամբ կապել. բայց այդ ապագայն դեռ հեռու է և մինչև գորա հասնելը Տաճկաստանի քրիստոնեայ ազգերը շատ և շատ առաջ գնացած կլինին և իրանք կլինին աւելի բարոյապէս ազդողնոյն իսկ Տաճիկների վերայ։ Գուցէ Ֆուադ փաշայի ներելի է իբրև ազգասէր Տաճկի ձուլման ցանկութիւնը, բայց դա մարդկութեան ոչ թէ օգտաւէտ չէ, այլ և վնասակար. որովհետև ամէն ազգութիւն ունի իւր առանձնայատկութիւնն, որոյ զարգացումն յօգուտ ընդհանուր մարդկութեան նրան է տուած ի բնէ։ Տաճիկն երբէք չէ կարող ոչ Հայի կատարելութիւնքն և ոչ էլ Յոյնինը սեպհականել իրան այնպէս, որպէս նոքա սեպհականած են նրանց բնութիւնից։ Ամէն բան, որ անբնական է, և բնութեան դէմ — անպտուղ է։ Ղարամանիայի Թաթառական Թիւրքմէնը երբէք չէ կարող լեռնաբնակ Հայի և կղզեբնակ Յոյնի դերը կատարել մարդկութեան համար, ինչպէս և Աւստրալիայի Պապուասը չէ կարող Անգլիացու կատարելութեանց հասնել, քանի նա Աւստրալիայի միջում և սա Անգլիայի ծովեզրումն է բնակում։

Աւելի անհեթեթ և անհիմն է հանգուցեալ Ֆուադ փաշայի արտայայտած այն գաղափարը, թէ մարդկութեան շահը պահանջում է, որ նորա մասերը կազմեն մեծ քաղաքական խմբեր, և թէ փոքր ազգութեանց քաղաքական ինքնուրոյն կեանքը վնաս է մարդկութեան շահերին և օրինակ է բերում մօտ 400 տարի Տաճիկների բռնութեան ներքոյ այլակերպված և ինքնուրոյնութեան համար դեռ ևս անպատրաստ Յոյներին։ Յայտնի բան է հանգուցեալին, իբրև ազգասէր Տաճկին ներելի է այս գաղափարը, որ օգտաւէտ է ոչ թէ մարդկութեան այլ Տաճիկներին, որոնք տիրում են ժամանակի բերմունքով ընդարձակ երկիրների. բայց այդ գաղափարը ոչ մի պատմական փաստի և ոչ էլ առողջ դատողութեան վերայ է հիմնված։ Մի՞թէ ազգերը ունենալով քաղաքական ինքնուրոյն կեանք չեն կարող մեծ դաշնակցական քաղաքական խմբեր կազմել, ինչո՞ւ կարևոր է անշուշտ Տաճկի բռնութիւնը միւս ազգութեանց վերայ, մի՞թէ ազատ բարեկամը աւելի լաւ չէ, քան բռնաբարած ստրուկը։ Կարելի՞ է արդեօք ապացուցանել, որ երբեմն ընդարձակ Սպանիան, ինչպէս և այժմ ընդարձակ Տաճկաստանը մարդկութեան աւելի օգուտ տուած լինին և տալիս լինին, քան փոքրիկ Բէլգիան և Հոլլանդիան։ Անհնարին է ապացուցանել, որ եթէ Հոլլանդացիք կազմէին ոչ թէ ազատ քաղաքական մարմին, այլ մի մեծ խմբի մասը, նոյն ճահճոտ երկիրը այսօր նման կլինէր մշակած ու գեղեցիկ այգու։ Եթէ Հոլլանդացիք ազատ քաղաքական մարմին չկազմէին այսօրվան գեղեցիկ Հոլլանդիան կներկայացնէր մեր աչքին անանցանելի ճահիճներ և նորա ծովեզրները փոխանակ գեղեցիկ նաւահանգիստների, ուր եռում է կեանք, աւազակոյտներ։

Ոչ միայն իւրաքանչիւր մեծ, թէ փոքր ազգի ինքնուրոյնութիւնը վնասակար չէ մարդկութեանն, այլ և նրան օգտաւէտ է. մինչև անգամ միևնոյն ազգի մասն մասն բաժանվելը քաղաքականապէս, նայելով սորա մասների առանձնայատկութեանց և նորա բնակած երկրի բնական դիրքին։ Մի՞թէ կարելի է ապացուցանել, թէ Գերմանիայի ներկայ քաղաքական զօրեղ մարմին կազմելը օգտաւէտ է թէ Գերմանիայի և թէ մարդկութեան բարօրութեան։ Նկատած է, որ ներկայումս Գերմանիան բարոյապէս և մտաւորապէս աւելի դանդաղ է առաջ գնում քան իւր միութիւնից առաջ։ Ի՞նչ օգուտ մարդկութեան, որ նա այսօր մի ահալի և սարսափելի էակ է դարձել, իւր բազմաթիւ զօրքերով և ահեղ թնդանօթներով։ Բռնի կենտրոնականութիւնը, իբրև բռնութեան աղբիւր, միշտ վնասակար է եղել մարդկութեան շահերին։

Այսպէս, եթէ Տաճկաստանը կամենում է, վերանորոգվել և գոյութիւն ունենալ ապագայում. նա չպէտք է հետևի Ֆուադ փաշայի ազգայնութեանց ձուլման գաղափարին, որ անշուշտ ապագայում աւելի մեծ դժուարութիւնք պիտի առաջացնեն նորա համար, այլ աշխատի լինի ամէն իւր հպատակ ազգերին թոյլ տալ զարգանալու ամէն կողմանէ ազատութեամբ և դաշնակցական ոգով կապել նրանց ի մի քաղաքական մարմին, բարոյական և նիւթաւոր շահերի ընդհանրութեամբ։ Նոքա միայն կը կապեն ազգերը սիրութեամբ, այն ինչ ամէն մի բռնութիւն, մինչև անգամ աննշան մի առանձնայատկութեան դէմ, ընդունակ է շատ ամուր կապերն էլ խզելու։ Բոլոր պատմական անցեալն այս է ցոյց տալիս։

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

ՁԱՅՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ.

Ահա երեք տարի է, որ առանձին ուշադրութիւն է դարձրած մեր երգեցողութեան կանոնաւորութեան մասին, և արդէն մեր հոգևոր երգերը — Շարականները կանոնաւորեալ և հայկական ձայնագրութեամբ ի լոյս ընծայեալ են, որոց մասին ուրիշ ժամանակ կխօսիմ։

Հայկական ձայնագրութիւնը, որոյ մասին խօսել եմ անցեալ տարի „Մեղու Հայաստանի“ լրագրի մէջ, բաւականին յաջողակութիւն է ստացել Ռուսիոյ հայոց քաղաքների մէջ և մեծ համակրութիւն է ստացել ժողովրդոց կողմից։ Արդէն ամենայն տեղ կարելի է գտնել մի կամ երկու ուսուցիչներ, որոնք ծառայում են այս արհեստի շուտափոյթ տարածման։ Բայց այդ նպատակին հասնելու առաջին պայմանն է մշակել արհեստը.

ՖՈՒԱԴ ՓԱՇԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏԱԿԸ.

Ինձ մնում է ապրել մի քանի օր, գուցէ միայն մի քանի ժամ և այդ ժամանակը ես կամենում եմ նուիրել իմ սուրբ պարտքը կատարելուն։ Ես կամենում եմ ներկայել Ձերդ մեծութեան պատուանդանին իմ վերջին մտքերի արտայայտութիւնքը, մտքերն որոնք գուցէ տխուր են, բայց հիմնված են թշուառ փորձառութեանց վերայ, որ ես ձեռք եմ բերել իմ երկարժամանակեայ պաշտօնական ասպարիզի միջոցին։ Այս տողերը պէտք է յանձնվին ձեր մեծութեանն այն ժամանակը, երբ ես թաղած կ'լինիմ այս աշխարհը։ Ուստի և դուք կարող էք ինձ լսել ամենայն հաւատարմութեամբ։ Այն ձայնը, որ լսվում է գերեզմանից, չէ կարող հարազատ չլինել։

Դուք Աստուծոյ կամքով կոչված էք փառաւոր, բայց ոչ անվտանգ, ասպարէզ։ Ձերդ մեծութիւնը. նախ և առաջ պէտք է ուշադիր լինէք մեծ, բայց տխուր ճշմարտութեան ձայնին։

Օսմանցւոց կայսրութիւնը վտանգի մէջ է։ Մեր հարևանների արագընթաց յառաջադիմութիւնքն և մեր նախնեաց անհասկանալի սխալանքները մեզ ձգել են ներկայումս ամենադժուար դրութեան մէջ։ Որ և է սարսափելի օրհասական դէպքի առաջն առնելու համար, Ձերդ մեծութիւնը պէտք է դուրս պոկվի անցեալից և մեզ առաջնորդի դէպի նոր վիճակ։ Մեր ագէտ հայրենակիցներն ոմանք աշխատում են մեզ հաւատացնել, թէ մենք կարող ենք վերականգնել մեր առաջվայ փառքը այն միջոցներով, որ գործ էինք դնում մենք հին ժամանակներումը։ Ցնորք մոլորութիւն և աններելի ինքնախաբեութիւն։ Եթէ մեր հարևանները գտանվէին այն դրութեան մէջ, յորում գտանվում էին նոքա մեր նախնիքների ժամանակը, գուցէ մեր առաջվայ միջոցները մեզ չվնասէին բոլոր Եւրոպայի տիրապետող, բայց տարաբաղդաբար մեր հարևաններն այն չեն, ինչ որ էին երկու դար սորանից առաջ։ Նոքա բոլորը յառաջ գնացին և մեզ շատ ու շատ յետ թողեցին իւրեանցից։

Մենք ևս ի հարկէ յառաջ ենք գնացել, մեր կառավարութիւնն այժմ աւելի լուսաւոր է քան թէ մեր նախնեաց ժամանակը. բայց տարաբաղդաբար այդ համեմատական գերազանցութիւնը չէ համապատասխանում մեր ժամանակակից պահանջներին։ Որպէս զի դուք կարողանաք ձեր գիրքը պահպանել Եւրոպայում, բաւական չէ որ գերազանցվէք ձեր նախնիքներից այլ հարկաւոր է, որ ձեր հարևանների հետ հաւասար կանգնէք միևնոյն աստիճանի վրայ։ Ձերդ կայսրութիւնը կջնջվի երկրի երեսից, եթէ որ չունենայ այնքան փող, որքան ունի Անգլիան, այնքան գիտութիւն, որքան Ֆրանսիան և այնքան զինուոր որքան Ռուսաստանը։ Մեզ բաւական չէ միայն յառաջադիմութիւն ունել, այլ պէտք է յառաջադիմութիւն ունել այնքան, որքան արել են Եւրոպական տէրութիւնները։ Մեր կարող կայսրութիւնը իւր մէջ պարունակում է զօրան հարկաւոր տարրեր, բայց այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է նախ և առաջ փոխել մեր բոլոր քաղաքական և քաղաքային հաստատութիւնքը։ Այն օրէնքները, որ օգտակար էին անցեալ դարերումը, վնասակար են ներկայ հասարակութեանը։ Մարդ պէտք է անդադար կատարելագործի իւր ստեղծած հաստատութիւնքը։

Մեր բաղդից բնութեան այդ առաջին և գլխաւոր օրէնքն ամենևին չէ հակաճառում մահմետական կրօնի հոգուն։ Իսլամականութիւնը ներկայացնում է միաւորութիւն բոլոր ճշմարիտ սկզբունքների, որոնք թոյլ են տալիս տիեզերքի և մարդկութեան կատարելագործութիւնքը։ Նոքա՝ որոնք աշխատում են այդ կրօնի անունով կապել մեր յառաջադիմական շարժողութիւնը պէտք է համարվին ոչ մուսուլմաններ, այլ խելացնոր հերձուածողներ։ Միւս բոլոր կրօնները կաշկանդված են այնպիսի սկզբունքներով և վարդապետութիւններով, որոնք չեն թոյլ տալի ոչինչ փոփոխութիւն և արգելք են լինում մարդկային մտքի զարգացմանը, մինչ միայն իսլամականութիւնն ազատ ամենայն խորհրդաւոր և անխախտական դիրքերից, միջոց է տալի ընթանալու բոլոր աշխարհի հետ և ստանալ լուսաւորութիւն ոչ միայն Արաբիայումը և մահմետական ազգերի մէջ, այլ որոնել լուսաւորութիւն նոյնպէս արտասահմանումը, Չինաստանումն և մինչև անգամ երկրագնդի ամենահեռաւոր սահմաններումը։ Չ'պէտք է կարծել թէ Մուսուլմանների ճշմարտութիւնն որ և իցէ բանով զանազանվում է Եւրոպական ճշմարտութիւնից։ Ոչ, ճշմարտութիւնը ամէն տեղ մի է. դա արեգակ է որ լուսաւորում է բոլոր տիեզերքը։ Միւս կողմից որովհետև իսլամն է բոլոր ճշմարտութեանց ընդհանրական արտայայտութիւնը, ուստի ամենայն նոր յայտնագործութիւն, ուր և նա արտայայտվէր. կռապաշտների մօտ թէ Մուսուլմանների, Մեդինայումը թէ Փարիզումը, պէտք է միշտ պատկանի իսլամին։ Ուստի և ոչինչ բան մեզ արգելք չէ լինում նմանիլ Եւրոպային նորա նորմուծութեանց մէջ։ Ես բաւական ուսումնասիրել եմ մեր կրօնը, որ կարողանամ բաւականին ծանօթ լինել նորա ճշմարիտ հոգուն. իմ գլուխը տակաւին բաւականին առողջ է, որ կարող լինի գիտակցաբար ըմբռնել իմ մտքերն և ի հարկէ ես չէի վտանգել դաւաճանել իմ Թագաւորին, հայրենիքին և կրօնին այն րոպէին, երբ թողում եմ կեանքս և պատրաստվում եմ կանգնել գերագոյն և բարձրագոյն դատաւորի առաջև։

Իմ ներքին համոզման բոլոր զօրութեամբ հաւատացնում եմ ձեզ, որ Եւրոպական նոր հաստատութիւններից ոչ մէկը հակառակ չէ մեր կրօնի հոգուն։ Երդվում եմ ձեզ որ նոյն իսկ իսլամականութիւնը պահպանելու համար, մենք պէտք է անյապաղ մտցնենք մեր մէջ այդ բոլոր մեծ հաստատութիւնքը, առանց որոց ոչ մի տէրութիւն չէ կարող այլ ևս գոյութիւն ունենալ։ Երդվում եմ ձեզ կրկին անգամ, որ ձեր կայսրութիւնը վերանորոգելով, դուք չէք մեղանչիլ մեր կրօնի սրբութեան դէմ, ընդհակառակը դուք դորանով մեծ և փառաւոր ծառայութիւն արած կլինէք մահմետական ժողովրդին։

Մեր հայրենեաց վերածնութեան գործն ունի կապ շատ զանազանակերպ հարցերի հետ, որոնց ես չեմ կարող ձեռնհաս լինել իմ այս նամակում չունենալով ոչ ժամանակ և ոչ ոյժ։ Ձերդ մեծութեան մօտ կայ այդ գործի համար մեծ պետական տաղանդ, որ էր իմ բարեկամը և եղբայրը։ Աղաչում եմ Աստուծոյն, որ նա պահպանի նորան ձեզ համար, որովհետև ոչոք նորանից լաւ չէ իմանում միջոցներ, որ կարող լինին փրկելու ձեր կայսրութիւնը։ Ես երբէք խորհուրդ չեմ տուել Ձերդ մեծութեանն առանց նախապէս ստանալու իմ այդ իմաստուն և փորձառու ընկերոջ համաձայնութիւնը։ Շարունակեցէք շնորհելու նորան ձեր հաւատարմութիւնը։ Մեծ Թագաւորի անսահման հաւատը կազմում է մեծ նախարարների ոյժը։ Սաստիկ համոզմունքով խնդրում եմ ձերդ մեծութեանը, թոյլ չտալ որ նորա պաշտօնակիցներից ոմանց խրատները հակառակ կանգնեն ձեզ այնքան հաւատարիմ և հարկաւոր ծառային տաղանդին։ Ոչինչ չէ կարող նորան այնքան յուսահատեցնել, որքան այն հարկաւորութիւնը, որ ստիպի նորան գնալ աջակցած այն անձանց հետ, որոնք անընդունակ են նորան գնահատելու։

Այժմ մնում է ինձ մի քանի խօսք ասել մեր յարաբերութեանց մասին դէպի միւս տէրութիւնները. այստեղ մեր դրութիւնը համար.

հեշտացնել միջոցները և դասատուութեան եղանակը հետզհետէ լաւացնել, որով կարելի է աւելի ընդլայնել նորա ասպարէզը և դիւրամատչելի կացուցանել ուսանողաց առաջև։ Թէպէտ ձայնագրութիւնն անցեալ տարուանից մուտ է մեր ծխական դպրոցների մէջ, սակայն պէտք է ասած, որ դեռ չունինք նոցա յարմար ոչ դասագրքեր և ոչ երգեր։

Ծխական դպրոցների երգեցողութիւնը պէտք է հասկանալի լինի երեխաներին, երգերն ևս պէտք է վերցրած լինին մանկական կեանքից և խրատող նիւթով և կազմուածքով պէտք է համապատասխանին երեխաների հասակին ու զարգացմանն, այլապէս երգը կկորցնէ իւր նշանակութիւնը և ոչինչ էլ օգուտ չի բերել։ Այս բանն ինձ փորձով պատահել է և կարծեմ ինձ հետ ձայնակից կը լինին և բոլոր ծխական դպրոցների դասատուքը, ուստի ձեռնամուխ եղայ յօրինել մի փոքրիկ ձեռնարկ ծխական դպրոցների երգեցողութեան դասատուութեան համար, և նորան համապատասխան մի փոքրիկ „Մանկական երգարան"։ Այս երկու աշխատութեանց ժամանակն ես աչքիս առաջն եմ ունեցել նաև օտարազգաց ուսումնարանների երգեցողութեան ձեռնարկները և Մանկական երգերը, որոնցից բաւական օգուտ քաղելով, արդէն պատրաստել եմ և հոգում եմ նոցա տպագրութեանց համար։

Վերջացնելով խօսքս չեմ կարող չյաւել, որ մեր ազգային ժողովրդական երգերը, որոնք ոչ պակաս նշանաւոր են, դեռ կարօտ են կարգ ու կանոնի տակ դնելու և ի լոյս ածելու։ Այս բանը ես յանձնառու եղած եմ սիրով կատարելու և կը յուսամ, որ երգերի ու տաղերի պ. պ. հեղինակները, քաջահմուտ երաժիշտներն ու ձայնագրագէտները, հայկական ձայնագրութեան ուսուցիչները և առհասարակ մեր թէ Ռուսիոյ և թէ Տաճկաստանի հայ եղբարքը իրանց կարողութեան չափ օգնութեան ձեռք կհասցնեն ինձ այս գործի մէջ՝ այն է կհոգան թէ իրանց մօտ գտնուած և թէ իրանց քաղաքի ու գաւառի մէջ երգուած երգերն ու տաղերը հայկական կամ Եւրոպական ձայնագրութեամբ (Նօտայիւ) ժողովել և առաքել ինձ ի տպագրութիւն։ Ես պարտաւորուած կլինիմ հրապարակաւ շնորհակալութիւն յայտնել նոցա օգնութեան համար և ձրիաբար ուղարկել մի մի օրինակ։

Տէր—Եղնիկ.

Տիֆլիս.

Գ. Բղնունին գրում է մեզ Ախալցխայից. «Բերկրութեամբ սրտի շտապում ենք յայտնել Մեղուի ընթերցողներին մի շատ ուրախարար լուր։ »

Քաղաքիս հայ քահանայից միաբանութիւնը օրերումս դրաւ մի ընթերցարան բանալ յատկապէս հոգևորական դասի համար։ Ընթերցարանը տեղաւորուելու է Ս. Փրկիչ եկեղեցւոյ գաւթում գտնուած մի սենեակում, որտեղ առաջ զետեղուած էր Հոգևոր կառավարութիւնը, որը չարթում տեղափոխուեցաւ յատուկ նշանակուած նոր շինութիւնը, նոյն եկեղեցւոյ գաւթի նորաշէն յաջորդարանի ներքնայարկը։ Ընթերցարանի համար նշանակուած շինութեան մաքրել, մանաւորապէս կարկատել և սպիտակացնել տալը իւր վրայ ընդունեց արժ. Թադէոս քահանայ Տէր-Վարդանեանցը, ընթերցարանի համար մի սեղան և վեց աթոռ պատրաստելն իւր հաշուում ընդունեց արժ. Կարապետ քահանայ Տէր-Գրիգորեանցն, սեղանի մահուդեայ ծածկոցն խոստացաւ իւր սեփականութիւնից գնել արժ. Կարապետ քահանայ Տէր Մարտիրոսեանցն, իսկ Ռուսաստանում հրատարակուող և հրատարակուելիք հայկական բոլոր լրագիրներն և ամսագիրներն ընթերցարանին մատակարարելն, մինչև առաջիկայ Նոր տարին, իւր վրայ ընդունեց Հոգևոր կառավարութեան քարտուղարը։

Այդ ընթերցարանի համար քահանայից միաբանութիւնն այժմ խմբագրում է մի կանոնադրութիւն որպէս զի խնդրագրով ներկայացնէ իւր բարձրագոյն Հոգևոր իշխանութեանը ի հաստատութիւն։

Ցանկանում ենք ի բոլոր սրտէ յաջողութիւն մեր արժանապատիւ հարց այդ գեղեցիկ ձեռնարկութեանը, որը կարող է իրանց թէ մտաւոր սնունդ տալ, թէ միաբանական ոգւոյն ընդելացնել և թէ հասարակութեան աչքում աւելի բարձրացնել քահանայական ճշմարիտ պաշտօնը։ »

—

Բաքուից գրում են մեզ. Յունիսի 5-ին վերջացաւ տեղւոյս երկսեռ ուսումնարանի հարցաքննութիւնը բաւական աջողակ կերպով. իսկ 6-ին, որ կիւրակէ էր, Մարդասիրական ընկերութեան ուսումնարանի մեծ դահլիճում եղաւ հրապարակական թեթև հարցաքննութիւն, որից յետ եղաւ և պարգևաբաշխութիւն։

Դահլիճի մի կողմում արդէն պատրաստ էին աշակերտուհեաց տարեկան ձեռագործները, որոնց վերին ծայրում մի կտոր մահուդի վրայ փայլում էր խոշոր տառերով ասեղնագործած «Ձեռագործք Օրիորդաց Հոփսիմեան Դպրոցի» Պարգևաբաշխութիւնից յետոյ սկսուեցաւ վիճակահանութիւնը, որից ստացուեցաւ 155 ռ.։

—

Թիֆլիսից հաղորդում են, որ ամսոյս 1ին այնտեղի սուրբ Գայիանեան օրիորդական դպրոցը շքեղութեամբ տօնել է Գայիանեան կուսանաց տօնը։ Կարգադրութեամբ Հայր Գէորգ աւագ քահանայի դպրոցի հոգաբարձուք, ուսուցիչք և աշակերտուհիք ներկայ են գտնուել պատարագին, որի ժամանակ 20 օրիորդք դպրութիւն են արել։ Պատարագից յետ կատարվել է հոգեհանգիստ սուրբ կուսանաց համար։ Գերեզմանը շրջապատած ունեցել են 60 աշակերտուհիք վառուած մոմերով։ Ապա աշակերտուհիք գնացել են դպրոցը, ուր միրգ են վայելել և մի քանի ժամ ուրախութեամբ անցուցել։

—

Լենքորանից պ. Գ. Տէր Ստեփանեանցը հաղորդում է, որ այնտեղ աշխատութեամբ մեծ. Աղէքսանդր և Մարգար Ստեփանոսեանցների մինչև 1869 թուականը կանգնեցաւ հայ եկեղեցին, որոյ ծախքն մօտ 14,000 է եղած։ Իսկ 1870 թուականից յետ ջանիւք մեծ. պ. Եփրեմ Սուքիասեանցի եկեղեցին, որ վաղ ծածկած էր եղէգնով, ծածկվեցաւ կղմինտրով։

—

Աւագ շաբաթի և պասկի օրերը Լենքորանին այցելութիւն է արած գեր. Սուքիասեան Գէորգ վարդապետն, որոյ յորդորմամբ բացվել է այնտեղ սուրբ Գայիանեան օրիորդական դպրոց։ Սորա օրհնութիւնն և բացումն եղել է մեծ հանդիսով ի ներկայութեան Լենքորանի գրեթէ բոլոր հասարակութեան պասկի երկուշաբթի օրը։ Սորա համար եղել է և ստորագրութիւն զանազան անձանց տանը հացկերոյթի ժամանակ և բաւականին գումար է հաւաքվել։ Վարժուհի և խնամակալուհի դպրոցին նշանակվել է տիկ. Գայիանէ Բաղերեանը։

—

Գ. Բղնունին հաղորդում է Ախալցխայից. Քաղաքիս հայ քահանայից միաբանութեան հիմնարկած ընթերցարանի կանոնադրութիւնը այս շաբաթ միաբանութիւնը ուղարկել է Սր. Թեմակալ Առաջնորդին ի հաստատութիւն։

—

Մայիսի 30-ին և 31-ին երեկոյեան նախատօնակներին Ախալց. Եղիսաբեթեան ուսումնարանի աշակերտուհիք Ս. Փրկիչ եկեղեցում, իսկ Նոր Արշալոյս ուսումնարանի աշակերտուհիք Սուրբ Վարդանայ եկեղեցիներում երգեցին «Անձինք նուիրեալք» շարականը։

—

Արժ. Տէր Թեմական վերատեսուչ Հայրը Ախալցխայ լինելիս քննել է միայն այնտեղի ուսումնարանների առաջին դասարանները։ Առաջիկայ Սեպտեմբերին պէտք է բացուին երկրորդ դասարաններ։

—

Ախալցխայ հոգևորականաց ընթերցարանը մինչև ցարդ մօտ 50 օրինակ գրքեր ընծայ ստացել է այլ և այլ անձինքներէ։

—

Խմբագրութիւնս շնորհակալութեամբ ստացաւ „Համառօտ Սոփերք Հայրենեաց գործերի վերայ" չափաբերական երկասիրութիւնը պ. Սարգիս Փ'լօեանցի Նորբայազետցւոյ, որ նուիրում է իւր գրուածքը իւր բարերար Թ. Գ. Մանէսի Բարեկեանցին։ Ծախւում է հայ գրավաճառների մօտ. գինն է 30 կոպ.

ՆԵՐՔԻՆ

ԵՐԵՒԱՆ.

(Թղթակցութիւն "ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ" Լրագրի)

—

Յունիսի 5-ին, զինի կէս օրուան՝ ժամի 4-ին քաղաքիս Արևելա—Հիւսիսից սաստ քամին վերկացաւ. քիչ միջոցից յետոյ ամառնային ջերմութիւնը գարնան զովութեան փոխարկուեց, թէպէտ և միևնոյն պայծառ արեւը չփոխուեց. ու երկնքի գոյնը չպղտորուեց։ Հողմն սկսուելուց հազիւ անցած էր կէս ժամ, և ահա քաղաքի հանգստութիւնը վրդովվեց. ահն ու երկիւղը պատեց ու պաշարեց ամենքի սիրտը. սարսափը տիրապետեց, քաղաքը դղրդաց. որը լացով ու գոռալով դէպի տուն էր վազում, որը քլունկ, թի կամ բահ ձեռքին տան դռներն էր դրսևանց քարում, հողով ու հիւն չորերով սղոցանում, ոմանք սանդուխներով կտուրներն ու տանիքներն էին բարձրանում կեանքերնին ազատելու կամ միայն հանդիսատես լինելու համար. ոմանք էլ ամեն ինչ մոռացած ժողովրդի անհոգութեան և անտարբերութեան վերայ էին բարկանում։ Այս տեսարանը չորրորդ անգամն էր, որ ներկայանում էր քաղաքումս վերջին 4 տարուան։ Տեսարան՝ տխուր և ահռելի տեսարան. որ ամեն ներկայանալով 50—100,000 ռ. զոհ է պահանջում, որ 73, 74, 75 և այժմ 76-ին ներկայացաւ աւելի ևս զարհուրելի պատկերով։ Դա մի կատաղի և զիժ հեղեղ էր, որ Արևելա—Հիւսիսային կողմերում գտնուող սարերի վերայ եկած յորդ անձրևներից և կարկտից գոյանալով, Կուր գետի վարարութեամբ «Գետառ» կոչուած ձորակով սրընթաց հոսանքով քանդելով գալիս էր քաղաքը կոխելու։ Կէս ժամուան մէջ քաղաքի մեծ բաժինը ծով էր կտրել. ներքնատուները. նկուղները և բազմաթիւ միայարկ տներ լցուեցան կամ պատուհաններով, կամ դռներով, կամ թէ պատերի փլվելով. ոչ ոք ոչ ոքի օգնութիւն տալու հնարք չունէր, ամենայն ինչ թողուած էր լոկ բախտին կամքին։

Հեղեղատը տևեց $1^1/_2$ ժամ. և այսքան միջոցում, հասարակաց խօսքին նայելով, 100,000 մանէթի վնաս տուաւ քաղաքին, առանց մարդասպանութեան։ Գուցէ հարիւրաւոր հոգիներ ջարդուէին, եթէ գիշեր ժամանակ գար այդ ահռելի հեղեղատը բայց քաղաքի բաղդը դարձեալ բանեց. ինչպէս նախընթաց չորս տարիներում։ Այսուամենայնիւ հիմնայատակ քանդած և կիսաւեր տների թիւը համարում են աւելի քան թէ 200։ Այս բոլոր վնասը մենք գրում ենք ժողովրդի մէջ խօսուած լուրերին համաձայն, չունենալով ստոյգ տեղեկութիւն մեր ձեռքին. ուստի և կարծում ենք որ դորա կէսը լինի ուղիղը։ Գուցէ ընթերցողը հարցնէ. չորս տարի իրար ետևից եկող այդ կատաղի թշնամու առաջն առնելու համար հասարակութիւնը կամ հասարակութեան գլխաւորներն ինչ հնար, կամ ինչ միջոց են մտածել և արել։ Պատասխանը շատ անմխիթարական է, լաւ է չը պատասխանել, քան թէ ասել—Պարոն նահանգապետի հրամանով երկու տարի առաջ մի ժողով է կազմուել, որը խորհել, խօսել և որոշել է 5500 կամ 6000 ռուբլի ծախս անել և փակել այն տեղը, որտեղից հեղեղը վազում է դէպ 'ի քաղաք, բայց այն որոշմունքը մնացել է թղթի վերայ միայն. չէ իրագործուել և գուցէ իրագործուի էլ ոչ, եթէ լինելու ծախսը քաղաքական գումարից չտրուի։

Բացատրենք պատճառը։ Երևանայ ժողովուրդը բաղկացած է գլխաւորապէս երկու ազգութիւնից. — Թուրքերից և Հայերից։ Թուրքերը Հայերից բազմաթիւ են, ասում են որ Հայերից էլ հարուստ են, բայց բնութեամբ ծոյլ, անտարբեր, և անզարգացած ու Հայերից մտաւոր կրթութեամբ շատ ստոր են։ Եթէ սոցա իրանց ազատ կամքին թողուի մտածել ու հոգալ որ և է հասարակաց օգտին ծառայող գործի մասին, նոքա ինքնուրոյն բնաւ ամենևին ոչինչ չեն անիլ. ապա հարկաւոր է մի հզօր ձեռք զօցա այս կամ այն կողմը շարժելու և բանացնելու համար։

Հայերը մտաւոր կրթութեամբ և բնաւոր ընդունակութիւններով Թուրքերից թէև բարձր են, աւելի ընդունակ ընկերավարչութեան, սակայն մի կողմից թուով սակաւ լինելով նոցանից, չեն կարողանում ամեն դէպքում համաձայնացնել իրանց հետ, միւս կողմից էլ հայերն, իրանք լինելով այլ և այլ տեղերից գաղթականներ, կազմում են առանձին—առանձին կողմնակիցներ. եթէ ոչ գաղափարական, գոնէ աւանդական, և այսպիսով ամբողջ զօրութիւնը բաժանվելով մասերի, այն աստիճանի է թուլանում, որ այլ ևս դէմ եկած արգելառիթներին յաղթել ու անցնել չէ կարողանում, և այսպիսով ամեն փոքր ի շատէ ծանրակշիռ գործ մնում է անմատչելի հասարակութեան։ Այսպիսի գործերի կարգին է և այժմեան հեղեղատի ճանապարհի չլինելութեան խնդիրը, որ՝ ինչպէս ասացինք, եթէ միմիայն ժողովրդի ազատ կամքին թողուի, անկարելի է որ սա շուտով կարողանայ գլուխ բերել այդ ամենակարևոր գործը։ Ուրեմն, կամ քաղաքական գումարից ծախսի համար պէտք եղած գումարը պէտք է վեր առնուի և ճանապարհը շինուի, և յետոյ ծախսուած գումարը բաժանուի հասարակութեան վերայ ըստ օրինի հարկաժողովման, և այսպիսով կրկին հաւաքուի և ամբողջանայ քաղաքական գումարը։ Այս կնշանակէ՝ նախ՝ օգնել և վտանգի բերանից ազատել հասարակութիւնը, և յետոյ պարտաւորել նորան ճանաչելու իւր պարտքը։

Վերոյիշեալ կերպով հարկաւոր է ազատել հասարակութիւնը ցեխաջուր և աղբաջուր խմելուց ևս, բերելով Գոխ—Բուլախի (քառասնակնեան) ջուրը՝ բաժանել թաղերի մէջ, որոյ համար ինչպէս լսել ենք 15000 ռուբլի ծախս է հաշուած, որն ըստ ինքեան մի բան չէ Երևանայ պէս քաղաքի համար։

Վերոյիշեալ երկու խնդիրները գլխաւորներն են, այն է՝ «գետառուի» ճանապարհի չլինելունը, որով հեղեղի տուած վնասներից կազատուի ժողովուրդը. և երկրորդը՝ Գըռխ—Բուլախից ջուր բերելունը. որով հասարակութիւնը կազատուի փողոցի միջով բաց գնացող ցեխոտ և ամեն աղտեղութիւններով լի ջրի գործածութիւնից, որոց մասին մի այլ անգամ աւելի հանգամանօրէն խօսելու առիթ կ'ունենանք։

Բացի այդ երկու գլխաւոր խնդիրներից. կան ուրիշ կարևոր խնդիրներ էլ, որք սակաւ հարկաւոր չեն քան թէ առաջինները, և որք վե-

---

եա թէ ոչինչ ելք չունի։ Ջանալով կարողութիւն ընդդիմանալ մեր թշնամիներին մեր սեփհական միջոցներով, մենք ստիպված ենք բարեկամներ և դաշնակիցներ որոնելու օտարների մէջ։ Այդ օտար տէրութեանց փոխադարձ նախանձը, թշնամութիւնը մեզ ձգում են չափազանց դժուար դրութեան մէջ։

Մեր ամենափոքր իրաւունքը պաշտպանելու համար, մենք ստիպված ենք գործ դնելու աւելի մեծ ճիգն, դիմելու աւելի խորամանկութեան և քաջութեան, քան թէ գործ էին դնում մեր նախնիքն ամբողջ տէրութիւններ քանդելու ժամանակ։

Մեր օտար դաշնակիցների մէջ դուք միշտ կգտնէք Անգլիան առաջին տեղումը։ Նորա քաղաքականութիւնն և նորա բարեկամութիւնը նոյնպէս անդրդուելի են, ինչպէս և նորա հաստատութիւնքը։

Նա արդէն ցոյց է տուել մեզ ահագին ծառայութիւններ և մենք չենք կարող անուշադիր թողնել այն ծառայութիւնքը, որ նա կարող է մեզ ցոյց տալ ապագայումը։ Ինչ որ էլ կը պատահի, այնու ամենայնիւ անգլիական ժողովուրդը, որ ամենահաստատ և ամենազարմանալին է բոլոր երկրագնդի վերայ, կլինի մեր առաջին և վերջին դաշնակիցը։ Ես աւելի լաւ եմ համարում, որ Տաճկաստանը կորցնի իւր մի քանի գաւառները, քան թէ կորցնի Անգլիայի բարեկամութիւնը։

Մեզ համար պէտք է թանգ լինի Ֆրանսիայի դաշնակցութիւնը ոչ միայն նորա համար, որ դիպող ժամանակում նա կարող է մեզ մահուան զարկ տալ։ Այդ ասպետական ազգը ներգործում է աւելի զգացողութեան ազդեցութեամբ, քան թէ հաշւով։ Նա ամենից պահանջում է փառք և բարձր գաղափարներ։ Եթէ դուք կամենում էք բարեկամութիւն պահպանել այդ վեհանձն ազգի հետ, պէտք է դնէք նորա գաղափարներին համաձայն և իրագործէք այնպիսի վերանորոգութիւններ, որ նոքա ազդեն Ֆրանսիական ժողովրդի երևակայութեան վերայ։ Հենց որ Ֆրանսիան կորցնի իւր յոյսը մեր վերածնութեան մասին, նա իսկոյն ինքը կ'սկսի լրումն տալ մեր վախճանին։

Եւրոպական շահերի խառնափնթորութիւնը ստիպեց Աւստրիային սահմանափակելու իւր դերը Արևելքում։ Նա մեծ սխալմունք արաւ Ղրիմի պատերազմի ժամանակ։ Արտաքսվելով Գերմանիայի սահմաններից, նա այժմ կհամոզվի որ այն վտանգը, որ սպառնում է հիւսիսից, նոյնպէս վտանգաւոր է իւր համար, որքան և մեր Կայսրութեան համար։ Մինչև Վիեննայումը տիրող կլինի հաստատ և շրջահայեաց քաղաքականութիւն, Աւստրիան կլինի Տաճկաստանի բնական դաշնակիցը։ Այն մեծ չարիքը, որ այնքան անհանգստութիւն է պատճառում Արևելքին, կարելի է բոլորովին անհետացնել միայն Աւստրիայի գործունեայ մասնակցութեամբ և մեր միւս արևմտեան դաշնակիցների օգնութեամբ։

Ինչ վերաբերում է Պրուսիային, նա մինչև այժմ շատ անտարբեր է դէպի մեր արևելեան գործերը։ Գուցէ պատահի, որ նա իւր շտապողական քաղաքականութեան մէջ մեզ զոհի, որպէս զի կարողանայ անարգել իրագործելու իւր մտադրութիւնն, այն է Գերմանիայի միութիւնը։ Բայց ոչինչ կասկած չկայ, որ Գերմանիայի այդ անհրաժեշտ միութիւնը իրագործելուց յետոյ, նա կհասկանայ իւր շահերի նշանաւորութիւնը և նշանակութիւնը Արևելքում. պէտք է միայն աղօթել Աստուծոյն, որ Գերմանիան չ'գնէ Աւստրիայի գինը մեր Եւրոպական գաւառների գնով։

Մենք վերջապէս հասանք Ռուսաստանին, այդ երդուեալ թշնամուն մեր Կայսրութեան։ Նորա ձգտումն դէպի Արևելք մի օրէնք է, որ նախագծել է նորա համար Նախախնամութիւնը և որ պէտք է առաջնորդի Մոսկովացւոց վիճակը։ Եթէ ոք ես լինէի ռուսաց նախարար, բոլոր տեղերքը տակն ու վրայ կանէի նորա համար, որ միայն տիրէի Կոստանդնուպոլսին։ Ուստի մենք չպէտք է զարմանանք ռուսաց քաղաքականութեան վերայ և ոչ գանգատվենք նորա մասին։ Նոքա վարվում են մեր դէմ այնպէս, ինչպէս մենք իւր ժամանակը վարվում էինք Բիւզանդացւոց դէմ։ Մեզ ռուսաց երեսից պաշտպանելու համար, բաւական չէ մեզ դիմել մեր իրաւունքներին, այդտեղ մեզ պէտք է ոյժ, ոչ այն մաշած ոյժը, որ այնպիսի մեծ դեր է խաղացել մեր անցեալումը, այլ նոր ոյժ, որին պարտական են Եւրոպական տէրութիւնները ժամանակից գաղափարներով և գիտութիւններով։ Պետրոս Մեծի ժամանակից Ռուսաստանը մեծ յառաջադիմութիւններ է արել. շուտով երկաթուղիները կտասնապատկեն նորա կարողութիւնը։ Ես երկիւղով նկատում եմ, որ Եւրոպան սկսում է հաշտվել Ռուսաստանի տիրապետողական ձգտումների հետ. ինձ նոյնպէս չափազանց զարմացնում է Անգլիայի անտարբերութիւնը դէպի այն անցքերը, որ լինում են կենդրոնական Ասիայումը։ Ձերդ մեծութեամբ մնում է ամրացնել մեր արևելեան սահմանները։ Ո՞վ է իմանում, կարո՞ղ են արդեօք մեր դաշնակիցներն իւր ժամանակին օգնութիւն համնել մեզ։ Որ և է ընտանեկան անհամաձայնութիւն Եւրոպայում կամ մի այլ Բիսմարկի երևալով Ռուսաստանում կարող է յառաջացնել մեզ համար ամենասարսափելի յեղափոխութիւն։

Ռուսաստանի առթիւ չեմ կարող մի քանի խօսք չասել և Պարսկաստանի մասին։ Այդ անհանգիստ երկրի կառավարութիւնը գտնվելով Շիիտեան մոլեռանդութեան ներքոյ, միշտ դաշնակից է եղել մեր թշնամիների հետ։ Ղրիմի պատերազմի ժամանակ նա համակրում էր Ռուսաստանին և եթէ որ չիրագործեց իւր թշնամական մտքերը դէպի մեզ, դորանով պարտական ենք արևմտեան դեսպանագիտութեան արթուն հսկողութեանը։ Քանի որ մեր ձեռքերը պարապած չեն, Պարսից թոյլ և անկիրթ կառավարութիւնը, զրկված ամենայն վարկից և օրինաւորութիւնից, չի համարձակվիլ մեզ ձեռք տալ, բայց հենց որ մենք թշնամական յարաբերութեան մէջ գտնվէինք Պարսկաստանի դրացի տէրութեան հետ, այն ժամանակը Պարսկաստանը զրգռված իւր կոյր նախանձից, կխանգարէ մեր թշնամիների կարգում։ Մեր բաղդից Տաճկաստանը բացի նիւթական ոյժից ունի և ուրիշ շատ բարոյական միջոցներ, որ կարողանայ ստիպել լսելու իւրեան այդ երկրում, որ գտնվում է բարբարոսական բռնութեան ներքոյ և անհամաձայնութեանց նիւթ է դառնում բազմաթիւ թագաժառանգների համար շրջապատուած ամեն կողմից սուննիական ցեղերով։ Այդ բարդ խնդրի մանրամասնութիւնքը կարող է ձեզ բացատրել Ալի փաշան։

Պէտք չէ նոյնպէս մոռանալ Յունաստանը, որ թէպէտ ինքն ըստ ինքեան ոչինչ չէ նշանակում, բայց մեզ թշնամի տէրութեան ձեռքում մեզ համար վտանգաւոր զէնք է դառնում։ Արևմտեան բանաստեղծներն երգելով այդ կործանեցեալ թագաւորութիւնը մտածում էին դէպի կեանք կոչել այն ազգը, որ երկու հարիւր դար առաջ անհետացել էր։ Աշխատելով վերականգնել Հոմերոսի և Արիստոտելի հայրենիքը, նոքա ստեղծեցին միայն նոր կենդրոն ինտրիգների, անիշխանութեան և աւազակութեան։ Տաճկաստանը կարող է յոյների մէջ գտնել մի քանի հաւատարիմ ծառաներ, բայց առհասարակ այդ ազգի ուղղութիւնը դէպի մեզ թշնամական կլինի։ Նոցա փառաւոր պատմութեան յիշատակները, որին այնու ամենայնիւ հետևեցին բարքերի ապականութեան և տգիտութեան ամբողջ դարեր, յոյս են տալի Յոյներին Բիւզանդիոնի Կայսրութիւնը վերա-

բաքերում են քաղաքի բարեկարգութեան և հասարակութեան ապահովութեանն ինչպէս քաղաքիս Թաղերի քարուքանդ եղած ճանապարհների, փողոցների եզերաց սալայատակների վերանորոգութեան, փողոցները շրջելու, գիշերը օրինաւոր լուսաւորելու, գոնէ գլխաւոր փողոցների վերայ երկուստէք ծառեր տնկելու, քաղաքական կլուբ և Թատրոն շինելու, ծառաներին հաւատարիմ ծառայելու վկայական տալու և այլ բազմաթիւ բարեկարգութեանց խնդիրներ, որոց կատարումը մնում է 1877 Թուին բացուելու քաղաքավարչութեանը, և մենք այդ ամենի մասին իւրեանց ժամանակին կը խօսենք:

Ամենից առաջ պ. նախագահը պէտք է բարեհաճի վերոյիշեալ երկու գլխաւոր խնդրոց մասին շուտափոյթ կարգադրութիւն անելու, ապա թէ ոչ այդ խնդրոց՝ գոնէ առաջինի (հեղեղի ճանապարհը փակելու) ուշացնելը կարող է ժողովրդի համար ամենաաղետալի թշուառութեան առիթ լինել. եթէ գիշեր ժամանակ հեղեղ գայ, հարիւրաւոր մարդիկ կը խեղդուին տների մէջ, և ով գիտէ այս երբ չի կարող լինել: Բայց և հասարակութեան հասկացող անդամներին կը վայելէ հետամուտ լինել այդ խնդրի իրագործուելուն, որով գոնէ ուշ, մեծապէս օգնած կը լինին հեղեղի պատժին մշտապէս ենթարկուող ազգականներին:

Ս. Բ. Ն.

ՋԱՔԱԹԱԼԱ.

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի)

Ամսոյս 5ին ճաշից յետ ժամին 1½ին տեղոյս հեռագրատան կայարանի, Ներքին Հարկի խանութներում, հրդեհ պատահեցաւ:

Բազմութիւնը հաւաքուած, սկսան աշխատել, որ հանգցնեն: Դրացի խանութատէրերը անհոգ էին, թէ չի շարունակուիլ այդ տեղից, դեռ. իրանք էլ եկել էին հանդիսատես լինելու. բայց հողմը սաստիկ լինելով, այնպիսի արագութեամբ տարածուեցաւ կրակն և շրջակայ խանութներն այրեց, որ ոչ ոք չկարողացաւ ոչինչ ազատել: (Պէտք է իմացած որ տեղւոյս վաճառականները բոլորը օտար երկրացիք են. աւելի Ագուլեցիք և իւրաքանչիւր մարդ խանութների ետևին տներ ունին, ուր իւրեանց ընտանեաց հետ ապրում են): Շատերը խանութներից ապրանքն ազատած տարել էին տները մտածելով, որ կարծես այնտեղ չի հասնիլ. ում տուն կամ խանութ փողոցի միւս կարգումն էր, նոյնպէս չէին մտածում թէ հրդեհը կարող է հասնիլ այնտեղ էլ, ուստի անհոգ աշխատում էին դրացիներին օգնել: Սակայն ի զուր էր նորանց մտածելը, պատճառ 5, 6, տուն կամ խանութ ընդմիջելով քամին կրակ էր ձգում Ներքին տունը. մէկ ժամից յետ բոլոր շրջակայքում կրակ երևեց, բոլորը շփոթուած մնացել էին, բազմութիւնը սկսաւ խառնուիլ, խանութատէրերը աղաղակում էին ձեռները գլխներին խփելով „վա՜յ, վա՜յ տունս քանդուեց, վա՜յ վա՜յ դուքանս այրուեց, վա՜յ: 2 ժամում բոլոր խանութներն այս անհաշտ թշնամին կլանեց, սկսաւ քաղաքի տներին մօտենալ. ժամի 4ին քամին հանդարտուեց, և կրակն էլ չտարածուեց:

Այժմ Ջաքաթալում 148 խանութներից 2 հատն է ազատուած մէկը դերձակի միւսը մկրտանի:

Իսկ քաղաքի տների կէսից աւել այրուել է. ժողովուրդը տեղ չը գտնելով մնալու սփռված թուրքերի (Լեզգիների) գիւղերը գնացին:

Բերդը, որ բաւականին հեռու և բարձր տեղ է, այնտեղ ևս երկու երեք անգամ կրակ ընկաւ բայց զինուորները շուտով հանգցրին, ապա թէ ոչ եթէ վառօդի կայարանը ընկնէր բոլոր Ջաքաթալան անդրդ աւերակ դառած կլինէր: Քաղաքում այժմ հաց թխողի խանութ էլ չը մնաց, և կամ թէ աղքատ և թէ հարուստ փող չունին որ գոնէ գիւղերից առնեն: Գաւառապետը մարդիկ ուղարկեց գիւղերը, որ հաց, եղ, բրինձ, և ուրիշ պաշարեղէններ հաւաքեն աղքատ ժողովրդի համար: Ահա այսպէս այժմ այն շքեղ փոքրիկ քաղաքը աւերակ է դարձել, ժողովրդի մեծ մասը ցրուել են թուրք գիւղորայքը. սոված և կարօտ կտոր հացի:

Ս. Նուէլ.

ԴԱՂԵՍՏԱՆՑԻ ԱՂԱ.

Իսկ մայիս ամսու սհաթը չորսին երկնքուն զանկերուն փոխան անպէս մէկ ախլաղարար անձրևմ էկաւ օ՜ր, երկինք, գետինք, ծով, ցամաք, ջուր կտրաւ: Քաղքիս միջին սէլաֆներն ալ անպէս կատղեցան օր, քիչ մնաց բիթուն քաղաքը սրբէր տանէր: Ա՜հ ի՞նչ տներ քանդեց, ինքան խալի խալիչաներ, եօրղան դոշակներ, մախմուռ կողպած լէքը սնդուկներ, սամավար ու պղինձներ, տաշտեր ու խոնչաներ, սաղ սաղ գոմեր, ղոջա ղոջա գեղներ մարդիկները յետկիլուց. մեշոքով ու ամպրներով ալներ, թխած հացեր տարաւ օ՜ր դուն ալ բնաս հերիք: Մտաւ զանկին Ազաներու ցօրեններուն մաղազէքը, խառնեց իրար գարին, ցորենը, հողը, շինեց հաբռայ, ու դուս էկաւ ատ տեղից մտաւ բիշկէշներուն գնացութ, խառնեց կարասները իրար, կիսատ կարօքները թըմբլեց, խանց տկերով տրաններ, հարսնե, ջխլատն կատղեցաւ: Աստեղից հարված դուրս էկաւ, մտաւ խանութուն մէջը, խեղճից ահդղն ու տեղը շատ եղներ ու գոմշներ, աստեղից ալ կաղած գուալով, պատերը քլնելով, մտաւ խեղճ բախալներուն մամաղէքը, աստեղ ալ կուլ տուեց անուշ ու մարխոժ մէյվաներ, ամպամպայրից մէշորով չրեր բրնձներ, բաղդրաւ խուրմաներ. կէրաւ կշտացաւ. վարնասուն, լոլը, սուսը քցեց քաղքիս մէջ, դլխն առաւ կորաւ գնաց, անտակրանքն ալ աչերուն մէջ ինչքան մալ օչխար էր խեղդել, քշել տարել էր օ՜ր, դուն ալ բնաս հերիք:

Անս գաղեթաճի աղա. խաւեղ էզնէիր, խաս բարի աչքներովդ տեսնէիր թէ ինչպէս խեղճ հարիքները չամահոլով էղած, լովով գլխուն զարնելով՝ „վա՜յ սնդուկս վա՜յ պղինձս գուալով՝ սէլաֆը զարկեր ու զարկուս վազվզէին կը ու ծխային կը „Աստուծու խաթեր, բանեցէք, բանեցէք". Հմա յանկարծ էնոր վէմ է, վէմ խեղել, ես վէմ տապան կենէ կը ջուրը մանել ու բան բաժընել: Վէմ ալ օր չունկով, ես չվանով բաճ կը բանէր, ջրից դուս կը հանէր ան ալ ան սհաթին տկմթալ կենէին իրար մէջ կորցնէին կը: Եանի բեսս ջրից հանածները թափ էնէին, ու խեղճ տիրոջը հասցնէին, տարիկ օր մեր քաղքին մարդուն Աստուած չէ տեսեր: Ալ ինչ գլուխ ցաւցնեմ ասպէս զուլում կրակտահա չէի տեսեր. Աստուած փրկէ ազատէ ասպէս սէլաֆներից ալ ու ասպէս մարդկանցից ալ:

Հրամանոցդ ծառայ
Գալաճի Մարքար.

Աղեքսանդրապօլ.

Տեղւոյս Արքունի կալուածոց վարչութիւնն որոշել է այս ամառուան ամիսների համար ամսական եօթանասուն և հինգ ռուբլի, որ Ալեքսանդրեան այգին իւրաքանչիւր օր ջրէր: Ցիրաւի սա մեծ լաւութիւն է Թիֆլիզի խեղճ ժողովրդոց համար, որոնք բացի այդ այգիից ամառուան շոք և անանձրև եղանակին չունին այլ տեղ, ուր կարող լինէին մաքուր և զով օդ ծծելու:

—

Ախալցխայից գրում են.

Ապագայ քաղաքային կառավարութեան ընտրութիւնները նշանակուած է, ի ձեռն յանձնաժողովին, յառաջիկայ ամսոյ 8-ից: Փափագելի էր որ մեր ժողովրդականք ուշադրութեամբ նայէին այդ ընտրութեանց վրայ և բարեխիղճ ու արժանաւոր մարդիկ ընտրէին իբրաւասուներ, ապա թէ ոչ օգուտ չի բերիլ վերջում ասել «հայի վերջին խելքն է գովելի»

—

Ախալցխայից գրում են. Ամսոյս 8-ին և 10-ին սկսուեցաւ և վերջացաւ մեր քաղաքային կառավարութեան իրաւասուների ընտրութիւնը: Ընտրութիւնն եղաւ շատ խաղաղ և յաջող կերպով.—Մեր իրաւասուների մեծագոյն մասը կազմում է երկրագործական խումբը, մի երևոյթ որ շատ ուրախալի է:—Յառաջիկայ փոստայիւ կուղարկեմ ձեզ մանրամասն տեղեկութիւնք այդ ընտրութեանց մասին.

—

Աղեքսանդրապօլից մեզ հաղորդում են, որ Մեղուի 18 համարում հրատարակած նկատողութիւնը ապրիլ 24ին տեղի ունեցած ներկայացման մասին սխալ է: Զաւեշտի մէջ ոչ մի քարոզ խօսեցած չէին, այլ եղել է շատ յարմար նկատմունք, թէ այնտեղի ժողովուրդը որպիսի նախապաշարեալ աչքով է նայում Թատրոնին և չէ ըմբռնում նորա կրթիչ և արդիւնաւոր նշանակութիւնը:

—

Մեզ հաղորդեցին, որ Նորին Բարձրութեան կովկասեան փոխարքային տեղապահը հաւաստիացրել է Գլլարի պատգամաւորներին, որ կը միջնորդէ Նորին Կայսրութեան Մեծութեան առաջ, որ Գլլարի հասարակութեան տրվի վեց հարիւր հազար ռուբլի տասն տարի ժամանակով, երեք հարիւր հազարը առանց տոկոսի և երեք հարիւր հազարը տոկոսով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.

(Թղթակցութիւն «ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ» Լրագրի):

Երէկ առաւօտ մայրաքաղաքիս մէջ ամեն մարդ իրարու սարսափելի ոճրագործութեան մը գոյժը կիմացունէին: Օսմանեան երկու բարձրաստիճան պաշտօնեայներ և ուրիշ երեք անձեր սպանուած էին գիշերայն:

Նախորդ Սուլտան Աբդուլ Ազիզ խանի երրորդ կնոջ եղբայր Չէրքէս Հասան պէյ որ 20 օրէ չափ նախորդ կայսրորդի Եուսուֆ Իզզէդդին իշխանին քով թիկնապահ եղած էր, սպարապետութեան պաշտօնեայ Հիւսէյին Աւնի փաշայն կորոշէ Պաղդատ ղրկել: Հասան այդ որոշումն չընդունելուն համար կը բանտարկուի և այս հինգշաբթի որ խոստանալով Պաղդատ երթալ գօլ աղասիութեան պաշտօնով, բանտէն կարձակուի: Գիշերայն Սպարապետին տունը կերթայ տեսակցելու, ուր իմանալով թէ սպարապետը Միդհատ փաշային տունը գնացած է և այնտեղ պաշտօնէից ժողով կը լինի, գիշերուան ժամը 4ին Միդհատ փաշայի ապարանքը կերթայ: Պաշտօնէից ժողովուած սրահէն ներս մտնել կուզէ. սենեակին առջև գտնուող սպասաւորը կարգիլէ ներս մտնել, ժողովը գաղտնի է ասելով և եթէ Հիւսէյին Աւնի փաշային խօսելիք ունի, երթամ իր սպասաւորին իմացունեմ կասէ և կերթայ: Այդ միջոցին Հասան սրահի դուռը բանալով ներս կը մտնէ, իր վրայ պատրաստ ունենալով մի քանի րէվօլվէր և մի դաշոյն: Սրահին մէջ կը գտնուէին բարձր Մեծ Եպարքոս Մէհմէդ Րիւշտի փաշան, պատերազմի պաշտօնեայ (սէրասքէր) Հիւսէյին Աւնի փաշան, Արտաքին գործոց պաշտօնեայ Րաշիդ փաշան և պետական խորհրդոյ նախագահ Միդհատ փաշան(*) և ուրիշներ: Րէվօլվէրը սպարապետին վրայ կը պարպէ և կը վիրաւորէ ձախ ստինքէն: Երկրորդ անգամ ալ սպարապետին վրայ պարպած տէէն արտաքին գործոց պաշտօնեայն կը զարնուի և կը մեռնի: Այնուհետև ծովային պաշտօնեայն կը հարուածէ. իսկ միւս պաշտօնեաները կը յաջողին փախչիլ: Այս միջոցին շուտով զօրքեր կը հասնին և ոճրագործը կը ձերբակալուի. արտաքին գործոց պաշտօնեայն և պատերազմական պաշտօնեայն ուրիշ երկու անձեր և մի զինուոր սպաննելէ և ծովալեա Ահմէտ փաշան և մի զինուոր վիրաւորելէ յետոյ: Մեռնողներուն թաղման հանդէսն երէկ կատարուեցաւ: Այժմ Սէրդարը էքրէմ (ժէնէռալիսիմ) Աբդուլ Քէրիմ որ Պօլսոյ կը գտնուի, պատերազմական պաշտօնեայ անուանուած է և մինչև մայրաքաղաքս գալը փոխանորդաբար պաշտօն պիտի վարէ Րէտիֆ փաշան: Դատական գործոց պաշտօնեայ Սաֆֆէթ փաշան Արտաքին գործոց պաշտօնեայ անուանեցաւ և նախարարաց ժողովին անպաշտօն անդամ Խալիլ Շէրիֆ փաշան դատական գործոց պաշտօնեայ եղաւ:

Ոճրագործն երէկ քննութեան առնուելէ յետոյ այս առաւօտ ժամը 8ին (ըստ թուրքաց) Սուլթան Բայազիտի բազմամարդ հրապարակը կախեցին և մինչև երեկոյ այն տեղ պիտի մնայ ի տես ժողովրդեան: Դատապարտեալը միայն շապիկ, վարտիք և գուլպայ ունի վրան և իւր կողմանի վիճակը հանդիսատեսներուն այլրութիւն հետ գութն ալ կը շարժէ: Հասան պէյ գրեթէ 25 տարեկան գեղադէմ երիտասարդ է, նրբահասակ և սևահեր:

Միջերկրական ծովեան ջուրերն և մասնաւորապէս Սալոնիկ հետզհետէ օտար տէրութեանց պատերազմական նաւեր կը գան հսկողութեան համար: Սալոնիկ ծովին վրայ այս օրերս սաստիկ փոթորիկ ելնելով, 32 նաւեր վտանգուեր են: Դեռ չեմք գիտեր թէ պատերազմական նաւեր

(1) Այս չարթու մայրաքաղաքս հասած Մեղուի և Մշակի մէջ կը տեսնեմք որ այս պաշտօնէից անունները սխալ նշանակուած են:

կանգնելու: Ամենաճիշտ պաշտպանողութիւնը այդ խորամանկ ժողովրդի դէմ կարող են լինել մեզ համար այն պակասութիւնքը, որք յատուկ են յոյներին: Անփառութիւնը և չափազանց առանձնականութիւնը զրգուել են նոցա դէմ Արևելքի միւս բոլոր ազգերին: Մեր քաղաքականութիւնը պէտք է աշխատի հեռացնել յոյներին մեր միւս քրիստոնեայ հպատակներից: Ամենից առաջ պէտք է Բուլղարներին պաշտպանել յունական եկեղեցւոյ ավրապետութիւնից: Ցաճկաստանն երբէք չպէտք է թոյլ տայ այն ձգտումներին, որոնց նպատակն է միացնել հայ Լուսաւորչականներին յունական եկեղեցու հետ. կարելի է մեզ համար աւելի ձեռնտու լինի աշխատել տարածել մեր քրիստոնեայ ազգերի մէջ փիլիսոփայական սկզբունքներ, որոնք թուլացնելով հոգևորականների ազդեցութիւնը կը օգնեն մարդկերանց միմեանց մօտենալուն: Շտապում եմ յարակցել որ այնու ամենայնիւ մեր քաղաքականութիւնը պէտք է ձգտի աւելի դէպի այն նպատակը, որ երկրի սկեսական չահերն աւելի բարձր դասուին քան ամեն կրօնական հարցեր:

Ներքին գործերի մէջ մեր այժմ պէտք է նկատի դէպի ցեղերի ձուլումն, առանց այդ ձուլման ես կարծում եմ անկարելի է Ցաճկական կայսրութեան գոյութիւն ունենալը: Այժմեան մեր ընդարձակ կայսրութիւնը չպէտք է պատկանի ոչ յոյնին, ոչ սլաւներին, ոչ մէկ և ոչ միւս դաւանութեանը, այլ պէտք է գոյութիւն ունենայ երկրի զանազանացեղ բնակիչների սերտ կապի զօրութեան հորհուրդ:

Եւրոպական մեծ տէրութիւնները կարող են տալ մեզ մի քանի ժամանակ պաշտպանել նոցա օգտակար և կարող անհատականութիւնը, բայց նոյնը չի կարելի սպասել որ և իցէ Գարադաղի, Սերբիայի կամ Հայաստանի համար: Այդպիսի երևակայական թագաւորութեանց գոյութիւնը վնասակար է մարդկային յառաջադիմութեան համար և վտանգաւոր է ընդհանրական խաղաղութեան համար: Ցեղութիւնները պէտք է ներկայանան մեծ ամբողջութիւններ:

Մեր տէրութիւնն անխուսափելի կորուստից ազատելու համար, հարկաւոր է նորան յեղափոխել և ամրացնել աւելի ամուր և ընդարձակ հիմանց վերայ և իրաւանց հաւասարութիւն հաստատել բոլոր ցեղերի և դաւանութիւնների մէջ: Հաւասարութեան իրաւունքը պէտք է մեր քրիստոնեայ հպատակներին կոչէ դէպի հասարակական պաշտօնակատարութիւնք: Այսուհետ յառաջանում են մեզ համար մեծ դժուարութիւններ: Մտաբերելով ծանր բռնութիւնից Ցաճկաստանի քրիստոնեաները շատ շուտ կչտացին փոխարկել իւրեանց ախոյեաններին: Այդ մտածմունքն նկատելի է մանաւանդ հայոց մէջ: Հարկաւոր է այդ եռանդի առաջն առնել, բանալով հասարակական պաշտօնակատարութեանց դուռը միայն նոցա համար, որոնք իւրեանց անձնական հայեացքները կզոհեն ազգայնութեանց ձուլման գաղափարին: Մեր քրիստոնեայ ազգերն երկու կրօն ունին այն է բարոյական և քաղաքական: Նոցա բարոյական կրօնքի հետ մեր կառավարութիւնն ոչինչ գործ չունի, բայց նա պէտք է ուշադրութեամբ հետևի նոցա քաղաքական կրօնին, որ շատ անգամ պարունակում է իւր մէջ այնպիսի սկզբունք, որ բացասում է մեր գոյութիւնը: Ուստի եթէ որ և իցէ փաշա կամ այլ պաշտօնատար երկրպագի Աստուծոյն Մովսէսի կամ Քրիստոսի օրէնքով, մենք չպէտք է մեզ զրկենք նորա օգտակար ծառայութիւնից, բայց եթէ այդ փաշան մտածում է վերականգնել Բիւզանդիական կայսրութիւնը կամ Հայոց թագաւորութիւնը, այն ժամանակը նա իբրև անբարեխիղճ ծառայ պէտք է զրկուի իւր պաշտօնից:

Միութիւն հիմնուած բոլորի իրաւանց հաւասարութեան վերայ այն դաւանութիւնը, որ հարկաւոր է պահանջել այն անձերից, որոնք ծառայում են մեր կառավարութեանը: Այդ արդիւնաւոր դաւանութեան բոլոր հրաշքներն տարածելու համար Ձերդ մեծութիւնը պէտք է ամենից առաջ վերանորոգէ դաստիարակական գործը: Այդ դժուար խնդիրը պահանջում է ձեր շուտափոյթ հոգացողութիւնը: Ապահովացնելով օրէնքի հիման վերայ բոլոր քաղաքացիների կեանքն և գոյքը, ձեր կառավարութեան առաջին պարտքը պէտք է լինի հոգալ ճանապարհներ շինելու վերայ: Այն օրից երբ մենք կունենանք այնքան ճանապարհներ, որքան ունին միւս եւրոպական տէրութիւնները, Ձերդ մեծութիւնը կկանգնէք երկրագունդի ամենառաջին կայսրութեանց գլխին, և մի այլ հարց որ ունի առաջնակարգ նշանակութիւն այն է ժողովրդի լուսաւորութեան հարցը, որի մէջ կայանում է հասարակական յառաջադիմութեան և փառաւորութեան աղբիւրը: Դատաստանը, զօրքը, կառավարութիւնն այդ բոլորը պայմանաւորվում է ազգային լուսաւորութեամբ, առանց որոյ մենք չենք կարող ունենալ ոչ զօրութիւն, ոչ անկախութիւն, ոչ կառավարութիւն և ոչ ապագայ: Ընդունելով որ մեր կրօնը իւր մէջ պարունակում է շատ խրատական բաներ. այնուամենայնիւ լուսաւորութիւնը մեզ մօտ շատ յետ է մնացած: Մեր բազմաթիւ մեդրեսէները (հոգևորական ուսումնարանները) և բաւականին դրամական միջոցը, որ մինչև այժմ անօգուտ գործ էին դնում նոցա վերայ, կասեն ձեզ բոլոր հարկաւոր տարրերը ժողովրդական լուսաւորութեամբ նոր ձևի կազմակերպութիւն տալու: Եթէ որ ես չկարողացայ իրագործելու այդ մեծ միտքը, դորա պատճառն այն էր, որ զանազան ճախորդ հանգամանքներ ինձ արգելք եղան: Ես այդ նախագծի իրագործումն թողնում եմ իմ յաջորդներին, նոքա չեն կարող գտնել դորանից աւելի փառաւոր և արդիւնաւոր գործ:

Ես գիտեմ որ մուսուլմանների մեծ մասն ինձ կ'նզովէ ինչպէս գեաւուրի և մեր կրօնի թշնամու: Ես ներում եմ նոցա բարկութեանը, որովհետև նոքա չեն կարող հասկանալ ոչ իմ խօսքերն և ոչ իմ զգացմունքները: Նոքա երբ և իցէ կհասկանան, որ այն մարդը, որին նոքա նզովում էին իբրև գեաւուր, աւելի լաւ մուսուլման էր քան թէ իւրեանց նզովող կոյր և տգէտ ջերմեռանդները: Նոքա վաղ թէ ուշ կհամոզուին, որ ես իբրև նախանձ պաշտպանում էի որ ազատեմ մեր կրօնը և մեր կայսրութիւնը, որոնք նոքա իւրեանց տգէտ առանձնականութեամբ կարող էին միայն հասցնել վերջնական կորուստի: Աստուածային և մարդկային գրքերի առաջին օրէնքն է ինքնապահպանութեան օրէնքը: Մեր բոլոր յեղափոխութեանց մէջ ես ուրիշ ոչինչ էի որոնում եթէ ոչ իսլամի պահպանութիւնը: Միայն և այդ նպատակին հասնելու համար աշխատում էի ուշադիր լինել ոչ մեր հին նախապաշարմունքների ձայնին, այլ ընդհանրական յառաջ էի ընթանում նոր, լուսաւոր ճանապարհներով, որ ցոյց էր տալիս մեզ Ամենաբարձրեալը:

Իմ թոյլ ձեռքը հրաժարվում է ինձ հնազանդելու: Աւարտելով այս տողերը, ես սաստիկ խնդրում եմ Ձերդ մեծութեանը ուշադրութիւն դարձնել ձեր տարաբաղդ ծառայի վերջին խորհուրդների վերայ, որ իւր մարդկային բոլոր թուլութեանց հետ միասին սիրում էր մարդկերանցը և աշխատում էր բարի գործել և որը թողում է այս աշխարհս առանց ցաւակցութեան, յանձնելով իւր հոգին Բարձրագոյն և Ամենողորմած Դատաւորին:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՓՈՍՏ

Խմբագիր Գ. ԱՐԾՐՈՒՆԵԱՆՑ

Հրատարակիչ Հ. ԵՆՓԻԱՃԵԱՆՑ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Կովկաս եւ Մերկուր ընկերութեան շոգենաւերի երթեւեկութիւնը Վոլգա եւ Կամա գետերի եւ Կասպից ծովի վրայ իւրաքանչիւր շաբաթ:

			Վճարելիք Նիժնիյից 1. դասկ. ր.	կ.	2. դասկ. ր.	կ.	3. դասկ. ր.	կ.
Նիժնիյ Նովգ. հեռանում է	կիրակի և չորեքշաբթ	11 ժ. առ.						
Կազան —	երեքշ. և ուրբաթ.	8 ժ. „	8	50	5	50	2	20
Սարատով —	չորեքշ. և կիրակի	10 ժ. „	21	50	14	10	6	—
Ցարիցին —	հինգշ. և երկուշաբ.	8 ժ. „	27	40	18	10	7	80
Հաշտարխան { գալիս է	ուրբաթ. և երկուշաբ.	2 ժ.	35	—	23	—	10	—
{ հեռանում —	—	9 ժ. „	—	—	—	—	—	—
Պետրովսկ —	կիրակի և հինգշաբթ.	8 ժ.	47	—	31	80	15	20
Դերբենտ —	—	3 ժ. ցերեկ	49	40	33	—	16	40
Բագու { գալիս է	երկուշ. և ուրբաթ.	1 ժ. „	57	40	39	80	18	80
{ հեռանում —	—	12 ժ. գիշեր	—	—	—	—	—	—
Լենկորան —	շաբաթ	5 ժ. ցերեկ	59	80	42	20	20	40
Աստարա —	—	12 ժ. գիշեր	60	60	43	—	20	80
Էնզելի —	կիրակի	12 ժ. ցերեկ	63	—	44	60	22	—
Աստրաբադ գալիս է	երկուշաբ.	7 ժ. երեկոյ	68	60	48	60	24	40

			Վճարելիք Աստրաբադից 1. դասկ. ր.	կ.	2. դասկ. ր.	կ.	3. դասկ. ր.	կ.
Աստրաբադից հեռանում է	Չորեքշ. —	3 ժ. ցերեկ						
Էնզելի —	Ուրբաթ.	6 ժ. առ.	17	—	12	—	7	—
Աստարա —	—	3 ժ. ցերեկ	21	—	15	—	8	—
Լենկորան —	—	9 ժ. երեկ.	22	—	16	—	9	—
Բագու { գալիս է	Շաբաթ.	12 ժ. ցերեկ	27	—	20	—	10	—
{ հեռանում է	կիրակի և Չորեքշաբ.	12 ժ. „	—	—	—	—	—	—
Դերբենտ —	երկուշ. և հինգշաբթ	9 ժ. առ.	31	—	24	—	13	—
Պետրովսկ —	—	6 ժ. երեկ	33	—	25	—	14	—
Հաշտարխան { գալիս է	Չորեքշ. և Շաբաթ	8 ժ. առ.	42	—	32	—	18	—
{ հեռանում —	—	10 ժ. երեկ.	—	—	—	—	—	—
Ցարիցին —	Ուրբաթ. և երկուշաբ.	8 ժ. առ.	48	—	36	20	19	60
Սարատով —	Շաբաթ և երեքշաբ.	2 ժ. ցերեկ	51	75	38	20	20	25
Կազան { գալիս է	երկուշ. և հինգշաբթ	12 ժ. գիշեր	60	50	43	55	22	80
{ հեռանում է	երեքշ. և Ուրբաթ	8 ժ. առ.	—	—	—	—	—	—
Նիժնիյ Նովգ. գալիս է	Չորեքշ. և Շաբաթ	9 ժ. „	68	60	48	60	24	40

Պարսկաստանի Դաւրէժ քաղաքի Արամեան դպրոցի Հոգաբարձութիւնը հրաւիրում է մի վարժապետ նոյն դպրոցում դասատուութեան համար ռուսաց լեզուից, թուաբանութիւն եւ աշխարհագրութիւնից: Տարեթական կունենայ 20 դաս իւրաքանչիւրն 1¼ ժամ, ամեն մէկ ամսականը կորոշէ դպրոցի տեսուչը: Ռոճիկի եւ պայմանների մասին դիմել «Մշակի» խմբագրատանը, կամ Տաշքենտի քարվանսարայում Գ. Ա. Մելիք-Ազարեանցի կանտօրը:

Թիֆլիզից դրսում գտնուող ցանկացողները կարող են թէզ թակցութիւն ունենալ ուղղակի դպրոցի Հոգաբարձութեան հետ Դաւրէժ քաղաքում և իւրեանց պայմանները առաջարկել:

Գանձապետ — Հոգաբարձու

1—(3)

Մանգլիսում առաջարկում են դասեր Մուզիկայի, զանազան առարկաների և նոր լեզուների, նմանապէս հայոց: Պատրաստում են երեխայոց ամենայն միջնակարգ ուսումնարանների համար, թէ օրիորդական և թէ տղայոց:

Հասցէն Մանգլիսում Կոնավալովի տուն, Բօշչայի դէմուդէմ:

1—(4)

Ի 1870 ամի

Ի ․․

Ի խմբագրատուն Մեղու
Հայաստանի լրագրոյն·

Խնդրեմ ուղարկել ներքոյ նշանակեալ հասցեով օրինակ „Մեղու Հայաստանի" լրագրի ներկայ 1870 ամի թեր-թերից, առաջին համարից սկը-սեալ շարունակաբար, որոյ ար-ժեքը, ընդ ամենն 7 ռուբլի, կը-գտնեք ծրարած նամակիս հետ 'իմիասին: